

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու _20 Հունվարի 2017թ. թիվ 3 որոշմամբ

ՈՒՌՈՒՏ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն.....	Error! Bookmark not defined.
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	13
3.1. Համայնքի զարգացման տեսլական	13
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	14
4. ՀԶԾ ֆինանսավորում.....	20
5. ՀԶԾ մոնիթորինգ	20

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Ուռուտ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուռուտ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում է սոցիալապես վատ պայմաններում

ա/ հաճախակի են լինում երաշտի և կարկտահարության տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի զգալի մասը,

բ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի աշխատողները և համայնքի ավագանին, քննարկվել և հաշվի են առնվել բոլոր առաջարկությունները:

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ուռուտ գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբին: Գետափը պատված է եղել ուռենիներով, որի պատճառով գյուղը և գետը անվանվել է Ուռուտ: Գյուղը փռված է << Մեծ Քար>> կոչվող սարի լանջին՝ երկու կմ երկարությամբ, ծովի մակերևույթից 1450 մետր բարձրության վրա: Կողքով հոսում է Ուռուտ գետը: Գյուղի արևելյան մասում է գտնվում Մբ. Աստվածածին եկեղեցին (11-րդ դար), իսկ հարավ արևմտյան մասում՝ բլրի գագաթին է գտնվում <<Սուրբ Սարգիս>> մատուռը, որի շրջակայքը 2011թ բարեկարգվել, ցանկապատվել և ծառատունկ է կատարվել բարերար Միքայել Ղարաքեշիշյանի միջոցներով:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են անձրևոտ, կարկտային, երաշտի տարիները, որից շատ տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները:

Գյուղը ապահովված է խմելու ջրով 80-90 %-ով: Խմելու ջուրը մատակարարում է << Հայջրմուկոյուղի>> ՓԲԸ Ստեփանավանի տեղամասը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2826,0 հա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 180 կմ է, մարզկենտրոնից՝ 45 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 7 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ստեփանավան քաղաքային և Բովաձոր, Լեջան, Սվերդլով գյուղական համայնքներին: Համայնքի բնակչության թիվը կազմում է 1148 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 580, կանայք՝ 568: Բնակչության տարիքային սոցիալական կազմն այսպիսին է՝

-0-6 տարեկան 102

-7-17 տարեկան-132

-18-63 տարեկան-792

-64 և ավելի տարեկաններ-122

կենսաթոշակառուների թիվ՝-152, այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 117

-հաշմանդամներ՝-36 մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 3 մարդ

-միակողմանի ծնողազուրկներ՝ - 6 աշխատունակներ- 703

-զբաղվածներ-815

-գործազուրկներ՝ - 143

- տնային տնտեսությունների թիվը՝-289

-ընտանեկան նպաստի պետական համակարգում հաշվառվածներ՝41

-նպաստառուներ՝ 36

Համայնքի Վարչական տարածքը կազմում է 2826 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր- 2395 հա
- բնակավայրի հողեր - 119 հա
- բնապահպանական նշանակության հողեր - 6 հա
- հատուկ նշանակության հողեր - 100հա
- անտառային և ջրային ֆոնդի հողեր - 162 հա
- արդյունաբերական նշանակության հողեր -37 հա
- էներգետիկայի ենթակառուցվածքների հողեր - 7 հա

1991թ հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի 315 տնային տնտեսությունների 355 ընտանիքներ: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 2,7 հա, այդ թվում 1,5 հա-ը՝ վարելահող, /տնամերձի հետ միասին/, 1,2հա-ը՝ խոտհարք:

1.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 25,3 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 12,9 մլն դրամ (51%),
- Ստորև բերված են համայնքում գործող ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակ	Եկամուտներ
Խանութներ	2	14 մլ
Կաթի մշակման արտադրամաս	1	750000

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	17 հա	425տ
Հացահատիկ	19հա	67տ
Բանջարանոցային մշակաբույսեր	15հա	113տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	1460
Այդ թվում կովեր	838
Մանր եղջերավոր անասուններ	487
Այդ թվում մայրեր	377
խոզեր	113
Այդ թվում մայրեր	18
թռչուններ	1841
Այդ թվում հավեր	1430
մեղվաբնտանիքներ	164

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 123 աշակերտ:

Դպրոցն ունի 27 աշխատող:

- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում են 13 երեխա:

Նախակրթարանն ունի 1 աշխատող:

- Համայնքում գործում է նորակառույց, առողջության առաջնային պահպանման կենտրոն, որը սպասարկում է 2 համայնքների:

Կենտրոնում աշխատում են 5 աշխատողներ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 41 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 27%:

1.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսված են հանրապետական ու մարզային առարկայական օլիմպիադաներ և ռազմա-մարզական խաղեր, որոնց մասնակցում են նաև Ուռուտ համայնքի լավագույն աշակերտները:
- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսված են միջհամայնքային համագործակցության նպատակային միջոցառումներ՝ սպորտային մրցումներ և վիկտորինաներ:
- Վորլդ Վիժեն միջազգային կազմակերպության համագործակցության շրջանակներում նախատեսված է հովանավորչական և կրթական ծրագրեր, ինչպես նաև Ամանորյա, երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ, տիկնիկային բեմականացման

ցուցադրություններ, ցուցահանդես-վաճառքներ, երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում:

Պետության կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը:

Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պարագայում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	25,4 մլն	25,8 մլն	26,5 մլն	27,1 մլն	27,9 մլն
Ա	Հարկային եկամուտներ	13,0 մլն	13,4 մլն	13,7 մլն	14,1 մլն	14,4 մլն
1	Հողի հարկ	8,8 մլն	8,8 մլն	8,8 մլն	8,8 մլն	8,8 մլն
2	Գույքահարկ	1,2 մլն	1,6 մլն	1,6 մլն	1,8 մլն	1,9 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	30 հազ	30 հազ	30 հազ	40 հազ	40 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	2,7մլն	2,7մլն	2,9մլն	3,0 մլն	3,2 մլն
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	12,4 մլն	12,4 մլն	12,8 մլն	13,0 մլն	3,5 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					

1.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ուռուտ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 45%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

.ֆինանսի բացակայությունը

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները:

3) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

5) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

6) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
.համայնքաբնակների աղքատությունը,

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի/ մասնակի/ քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

9) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.սեյսմիկ գոտում գտնվելը,

10) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

. վարելահողերի չմշակելը

.ռոռոգման ցանցի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

11) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

12) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

13) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

14) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

15) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
- ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,
 - բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով,
 - դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,
 - ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,
 - զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները
 - է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը / մոտիկությունը մարզկենտրոն Վանաձորին , տարածաշրջանային կենտրոն Ստեփանավանին, հանրապետական նշանակության Վանաձոր-Ստեփանավան ճանապարհին/:
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը:
- Բնակավայրին հարակից անտառային գոտու առկայությունը:
- Համայնքում միջնակարգ դպրոցի և նախակրթարանի գործելը:
- Համայնքում նորոկառույց ԱԱՊԿ-ի առկայությունը:
- Համայնքում բջջային հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը:
- Համայնքի խմելու ջրով ապահովվածությունը:
- Համայնքի գազաֆիկացման համակարգի առկայությունը:
- Համայնքում փողոցների արտաքին/ գիշերային/ լուսավորության համակարգի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղապետարանի շենքի և համայնքային կենտրոնի բացակայությունը:
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը:
- Մշակույթի տան բացակայությունը:
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը:
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման բացակայությունը:
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բանակայությունը:
- Վարելահողերի չմշակելը:
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը:
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը:
- Համայնքի եկեղեցու վերանորոգման խնդիրը, բնակչության հոգևոր կարիքների բավարարմանը չնպաստելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքային նոր կենտրոնի կառուցում, որը կնպաստի ՏԻՄ-երի աշխատանքներին, մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը:
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության և շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը:
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը:

- Համայնքի երիտասարդների արտագաղթը՝ արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը, վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ նախակրթարանի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությանը:

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,

- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում

- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում:

- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների / ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադրյալական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն/ շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով,

- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

Համայնքի զարգացման 2017-21թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության / հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության / զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների, փողոցների վիճակի բարելավում և ջրահեռացման համակարգի կառուցում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ / ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ/ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով հախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ 2017-21թթ. Նախատեսվում են հատկապես հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները:

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով /երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի/ գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության, աջակցության և այլ ուղղություններով:

- համայնքային կենտրոնի կառուցում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչներ մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում:

- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-21թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ընդհանուր աղբավայրի կառուցում և շահագործում,

- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,

- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում,

- այլ ծրագրեր և ծառայություններ:

2017-21թթ. Ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցությունը « Վորլդ Վիժն» Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպության Ստեփանավանի տարածքային զարգացման ծրագիր հետ՝ համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

2017-2021թթ ՀԶԾ_ՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը /հազ.դր/
1	Համայնքային կենտրոնի կառուցում	100000,0
2	Ներհամայնքային փողոցների նորոգում և բարեկարգում	2000,0
3	Ջրամատակարարման ներհամայնքային համակարգի նորոգում	2000,0
4	Հուշարձանի և զբոսայգու նորոգում և բարեկարգում	5000,0

Ծրագիր 1

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքի գյուղապետարանը, գրադարանը չունենալով առանձին շենքեր, ժամանակավորապես տեղակայված են համայնքի նախկին մանկապարտեզի շենքում, որի պայմանները չեն համապատասխանում նշված հիմնարկների գործունեության բնույթին և պահանջներին: Համայնքային կենտրոնի կառուցման դեպքում հնարավոր կլինի

. տեղափոխել համայնքի գյուղապետարանը

.գրադարանը

.մշակույթի տունը

. կատեղծվեն և կգործեն մշակութային տարբեր խմբեր, խմբակներ՝ բնակչության ներգրավմամբ

. կկազմակերպվեն և կանցկացվեն հասարակական և մշակութային տարբեր միջոցառումներ

.Կբարձրանա համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը

.կբարելավվի համամայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

. կաշխուժանա համայնքի հասարակական և մշակութային կյանքը

Ծրագրի իրականացման համար գտնել դոնոր կազմակերպություն, ծրագիրը ներկայացնել դոնոր կազմակերպությանը, կազմել պլանային նախագիծ և բյուջե:

Ծրագրի իրականացման համար ներդնել անհրաժեշտ գումարի 5%-ը:

Ընդհանուր բյուջե -100 մլն դրամ

Ծրագիր 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 4,5 կմ: Համայնքում շահագործվում են 81 մարդատար և 25 բեռնատար մասնավոր ավտոմեքենաներ, որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար: Ներհամայնքային փողոցների բարեկարգումը կվերացնի՝

- . փողոցների ջրափոսերը,
- . փողոցը կդարձնի անցանելի և հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար
- . տարվա բոլոր եղանակներին կունենանք բարեկարգ փողոցներ

Ծրագրի իրականացման համար գտնել դոնոր կազմակերպություն, ծրագիրը ներկայացնել դոնոր կազմակերպությանը, հավանության արժանանալու դեպքում ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները:

Կատարել համայնքի ներդրում 5 %-ի չափով:

Ծրագրի բյուջեն կազմում է 2 մլ դրամ:

Ծրագիր 3

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Համայնքի ջրամատակարարման ներքին ցանցի որոշ հատվածներ վերանորոգվել և փոխարինվել է նորով, բայց դեռ կան փոխման ենթակա հատվածներ:

.Փոխելու ենթակա է 300 մետր Դ- 0,50 մմ և 120 մետր Դ-110մմ խողովակներ:

.Վերանորոգման արդյունքում համայնքը կունենա որակյալ ջուր,

. կեղտաջրերը չեն թափանցի համակարգ,

.չի առաջանա համաճարակի տարածման վտանգ,

. բնակչությունը, դպրոցը և բուժ ամբուլատորին կունենան խմելու որակյալ ջուր:

Ծրագրի իրականացման համար գտնել դոնոր կազմակերպություն: Ծրագիրը ներկայացնել դոնոր կազմակերպությանը, հավանության արժանանալու դեպքում ստանալ համապատասխան գումարը, և կազմակերպել աշխատանքները:

Կատարել համայնքային ներդրում 5%-ի չափով:

Ծրագրի բյուջեն կազմում է 2 մլն դրամ:

Ծրագիր 4

Համայնքում 1965թ-ին կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը իր զբոսայգով: Տարիների ընթացքում հուշարձանը և շրջակայքը դարձել է անբարեկարգ և կարիք ունի վերանորոգման, բարեկարգման և գույքի ձեռք բերման: Զբոսայգու վերանորոգումը

.կվերանորոգվի հուշարձան կոթողը,

.կկանաչապատվի և կկատարվի ծառատունկ

.ձեռք կբերվի գույք, երեխաների համար կառուսել և սղդարաններ

. կբարելավի համայնքի բնակչության, երիտասարդների և երեխաների հանգստի պայմանները

Ծրագրի իրականացման համար գտնել դոնոր կազմակերպություն: Ծրագիրը ներկայացնել դոնոր կազմակերպությանը, հավանության արժանանալու դեպքում ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները:

Կատարել համայնքի ներդրում 5%-ի չափով:

Ծրագրի բյուջեն կազմում է 5 մլն դրամ

3. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

4. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրի՝ (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույց

«Համայնքային կենտրոնի կառուցում»
(Ծրագրի անվանում)



Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ուռուտ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացում							
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակչության մասնակցության աճ հասարակական և մշակութային կյանքին							
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		100	105	120	125	130	140	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կառուցված համայնքային կենտրոն							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		0	0	1	1	1	1	
	2. Բարելավված մշակութային կյանք							
	Ցուցանիշներ %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
		0	100	110	115	120	130	
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. կազմել,քննարկել, հաստատել ծրագրի Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը 1.2. ավագանու կողմից կայացնել հողահատկացման որոշում 1.3.Օժանդակել ՀՀԲՆ կազմակերպելու շին կազմակերպման մրցույթ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. վերահսկել շինարարական աշխատանքներին						
	Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 95մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 100մլն դրամ՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	դրամական միջոցներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը							
Ծրագրի հիմնական շահառուները	Ուռուտ համայնքի բոլոր բնակիչները:							
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը կունենա նոր կենտրոն,որտեղ կաշխատի գյուղապետարանը, գրադարանը, կակտիվանա համայնքի մշակութային կյանքը							

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3



« Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրագծերի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ուռուտ համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի ջրով ապահովում						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	140	150	160	190	190
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, և կանոնակարգված ջրի բաշխում:						
	Ցուցանիշներ մետր	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	70	80	100	100	70
	2. Բարելավված ջրագիծ						
	Ցուցանիշներ մարդ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	30	35	45	45	25
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով: 1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռք բերել մետաղապլաստե խողովակներ, և փականներ 2.2. Խողովակները միացնել ջրագծին 2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի ջրագիծ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝500 հազ. դրամ Կապիտալծախսեր՝ 1,5մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2մլն դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Ուռուտ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բնակիչները կունենան մաքուր խմելու ջուր						

Համայնքի 2017-2021 թթ ֆինանսական ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

Ե/Կ	Ծրագրի անվանումը	Հափ ի միավ որ	Ծրագրի քանակա կան ծավալը	Ծրագ րի արժեք ը /կև/	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2017	2018	2019	2020	2021	Համայնք ի բյուջե	Դոնոր կազմակեր պություն	Պետ բյուջե և այլ 95,0
1	Համայնքի կենտրոնի կառուցում	շենք	1	100,0	2,5	12,5	20,0	30,0	35,0	5,0		
2	Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	կմ	1,2	2,0	0,5	0,5	1,0			2,0		
3	Զբոսանոցակարարման համակարգի վերանորոգում	կմ	0,5	2,0		0,5	0,5	0,5	0,5	2,0		
4	Հուշորձանիկի և զբոսայգու վերանորոգում և բարեկարգում	քմ	300	5,0		5,0				1,0	4,0	

Համայնքի 2017-2021 թթ. ֆինանսական ապահովված ընդհանուր և որոշակի ծրագրերի անվճար

Խ/հ	Ծրագրի անվանումը	Չափ ի միավ որ	Ծրագրի քանակա կան ծավալը	Ծրագ րի արժեք ը /վկն/ /վկն/	Ծրագրի կատարումն ըստ տարիների						Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2017	2018	2019	2020	2021	Համայնք ի բյուջե	Դոնոր կազմակեր պություն	Պետ բյուջե և այլ	95,0
1	Համայնքի կենտրոնի կառուցում	շենք	1	100,0	2,5	12,5	20,0	30,0	35,0	5,0			
2	Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	կմ	1,2	2,0	0,5	0,5	1,0			2,0			
3	Ջրամատակարարման համակարգի վերանորոգում	կմ	0,5	2,0		0,5	0,5	0,5	0,5	2,0			
4	Հուշորձանիկի և զբոսայգու վերանորոգում և բարեկարգում	քմ	300	5,0		5,0				1,0	4,0		